ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԺԱԿ ՇԻՐԱԿԻՆ

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեկտեմբերի 7-ին Նյու Յորքից շնորհակալական հետևյալ նամակն է հղել Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակին՝ 1988 թ. երկրաշարժի 10-րդ տարելիցի կապակցությամբ Վեհափառ Հայրապետին ուղղված Ֆրանսիայի նախագահի նամակի առիթով:

Նորին Գերազանցություն
Պրն. Ժակ Շիրակին՝
Ֆրանսիայի Հանրապետության նախագահին,

Փարիզ, Ֆրանսիա

Պրն. Նախագահ,
Թանկագին Բարեկամ,

Ես խորապես զգացված եմ նոյեմբերի 21-ի Ձեր նամակով և համակրանքի ու համերաշխության ազնիվ զգացմունքներով, որ Դուք արտահայտում եք նամակում երկրաշարժի 10-րդ տարվա առիթով, որը 1988 թ. ողբերգական հետևանքներով ցնցեց Հայաստանը: Դուք իրավացի եք՝ ասելով՝ «կյանքը հաղթանակեց»: Հայաստանը դուրս է գալիս վշտի խավարից և ազգի տեսիլքով քայլում է դեպի իր ապագան՝ ոտքի կանգնելով ու զարգանալով:

Հայաստանյայց Եկեղեցու և նրա՝ Հայաստանի ու Սփյուռքի զավակների անունից ես կցանկանայի արտահայտել մեր ողջ երախտագիտությունը այն օրինակելի աջակցության համար, որ Ֆրանսիան ցուցաբերեց Հայաստանին՝ Ձեր նախագահությամբ: Սակայն Ֆրանսիան միշտ էլ հատուկ հոգատարություն է ցուցաբերել Հայաստանի նկատմամբ: Մենք ամբողջ սրտով ցանկանում ենք, որ Ֆրանսիան ծաղկման անհամար տարիներ վայելի և կարողանա մնալ որպես առաջընթացի աղբյուր մյուս ժողովուրդների համար:

Սիրելի պրն. Նախագահ, ընդունեցեք իմ խորին հարգանքի հավաստիքը և իմ օրհնությունը Ձեզ, Ձեր ընտանիքին և Ֆրանսիայի մեծ ընտանիքին:

Սիրով և աղոթքով՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

7 դեկտեմբեր, 1988 թ.